

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Յ.Ս.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

դ.յ.ն., պրոֆ., акад. НАН РА **Գ.Ս.Կազինյան** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Ր.Բալայան**, д.ю.н. **Վ.Վ.Գրուզдев**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Մ.Մ.Սարգсян**, к.и.н., доц. **Ն.Յ.Բաгдасарян**, к.п.н., доц. **Ս.Ս.Գалстян**, к.э.н., доц. **Ս.Ր.Айриян**, к.ю.н. **Ա.Գ.Արутյոյան**, к.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, к.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

ԱՐՅԱԽՅԱՆ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԸ. ԵՐԵՎ ԵՎ ԱՅՍՕՐ

Քնար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող
knarbanaser@gmail.com*

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Գևորգ Տեր-Վարդանյան

Որևէ ժողովրդի ինքնության բացահայտման, անցած ուղին կարևորելու և համամարդկային արժեքների շարքում սեփականը ներկայացնելու գործում շատ մեծ, ռազմավարական դեր ունի մշակույթը: Մեր՝ հայ ժողովրդիս մշակութային ու հոգևոր կարևորագույն արժեքներից մեկը 5-րդ դարից՝ գրերի գյուտից սկսած, գիրքն է: Ձեռագիր մատյաններն են մեր ինքնության, լուսավոր և մութ օրերի վկաները, հայ արվեստի գոհարներից և հանճարի փայլատակումներից մեկը՝ ի տես ամբողջ աշխարհի և մարդկության:

Յուրաքանչյուր ձեռագիր իր մեջ բովանդակում է ոչ միայն պատմագրական, գրական-գեղարվեստական, դավանաբանական արժեքավոր երկ, այլև հաճախ տվյալ ձեռագրի ստեղծման ժամանակաշրջանի, վայրի, ստեղծողների պատմությունը՝ հանդես գալով իբրև արժեքավոր սկզբնաղբյուր: Հայ գրչությունից ու ձեռագրական ավանդույթից անմասն չի եղել, հայերեն ձեռագրերի ստեղծման դարավոր պատմության էջերը նշանավորել ու հարստացրել է նաև Արցախի աշխարհը:

Արցախը հայոց այն երկրամասն է, որտեղ 5-րդ դարում հենց Մաշտոցի օրոք ու ջանքերով սկիզբ է դրվել հայ դպրությանն ու գրչությանը: Եվ առավել քան տրամաբանական ու օրինաչափ է, որ Արցախը դարեր շարունակ եղել է հայերեն ձեռագրի ստեղծման վայրերից մեկը՝ իր վանքերով ու անապատ-ճգնավայրերով, գրի և դպրության անխոնջ նվիրյալներով, հարուստ գրադարաններով, մատենադարաններով: Ու թեպետ այստեղ ստեղծված ձեռագրերի մեծ մասն այսօր մեզ չի հասել, բայց պահպանվածն էլ բավական է հասկանալու կատարված աշխատանքի ընդգրկունությունը, կատարելու զանազան ուսումնասիրություններ:

Ըստ Էուռթյան, Արցախյան մատենադարանի պատմության մասին խոսել նշանակում է մշակույթի ու գիտության համաշխարհային մակարդակով ընդունված և կարևորված ճյուղերից մեկի՝ ձեռագրագիտության ընդհանած փաստերով մեկ անգամ ևս հիշելու և աշխարհին հիշեցնելու, թե ո՞ր դարերում և ի՞նչ համամարդկային գործեր է ստեղծել, ինչպիսի արհավիրքների միջով է անցել, ինչ գնով է վերածնվել և պահել բարձր արժեքներն ու գիտակցությունը հայ ժողովուրդը և նրա մի անքակտելի մասնիկ Արցախի աշխարհը:

Արցախում գտնված ձեռագրերին անդրադարձել են դեռևս 19-րդ դարից սկսած. այսպես Մ. Բարխուդարյանցը իր «Արցախ» աշխատության մեջ նշում է Արցախում իրեն հայտնի 117 ձեռագրի մասին¹ և թվարկում

¹ **Բարխուդարյանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 457:

դրանք ըստ գտնվելու վայրերի՝ համառոտ տալով արտաքին նկարագրությունն ու հիշատակարանները, ապա Րաֆֆին «Խամսայի մելիքությունները», Յ. Ոսկյանը «Արցախի վանքերը» երկերում, Լեոն իր աշխատություններում, 20-րդ դարի կեսերին Բ. Ուլուբաբյանը «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում» և այլք նշում են Արցախում գտնվող ձեռագրերի մասին՝ համառոտ թվարկմամբ կամ որոշ մանրամասներով: Արցախի ձեռագրերի գիտական համակարգված նկարագրությունների առաջին հրատարակությունը առանձին ձեռագրացուցակի տեսքով 1898 թ.-ին Խաչիկ Դադյանի հարուստ հավաքածուի ցուցակն է¹: Այդ հավաքածուն, որ բաղկացած էր 123 հայերեն և 30 արաբատառ ձեռագրերից և 1903 թ.-ին հանձնվել է Էջմիածնին, Խ. Դադյանը հավաքել էր Արցախում՝ փրկելով կորստից ու անհայտությունից: Իսկ ձեռագրերի ստեղծման, գրչության վայրերի պատմության վերաբերող ուսումնասիրություններ սկսվել են կատարվել շատ ավելի ուշ, կարելի է ասել 20-րդ դարակեսից ու հատկապես մեր օրերում. արժանահիշատակ են Օննիկ Եգանյանի «Գանձասարի հայերեն ձեռագրերի հաւաքածուն», «Մեծ Բանանց գիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցու հայերեն ձեռագրերի հաւաքածուն» հոդվածները², արվեստաբան Յրավարդ Յակոբյանի «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ.» (1989 թ.) ապա 2014 թ.-ին լույս տեսած «Արցախի մանրանկարչական արվեստը», և Թամարա Մինասյանի «Արցախի գրչության կենտրոնները» ալբոմ-ուսումնասիրությունը՝ լույս տեսած 2015 թ., որոնցից մեծապես օգտվել ենք:

Արցախի մատենադարանի երեկվա մասին խոսել նշանակում է ունեցած ձեռագրական կյուրթի, կատարված հետազոտությունների հիման վրա ամփոփ կերպով ներկայացնել Արցախի հիմնական գրչության վայրերը. որտե՞ղ և ե՞րբ են ստեղծվել մեզ հասած ձեռագրերը, ինչպե՞ս են պահվել, ի՞նչ տեղեկություններ ունենք մեզ չհասած ձեռագրերի մասին, ապա առանձնացնել տարբեր պատճառներով և պայմաններում Արցախում հայտնված և պահված, սակայն Յայաստանի այլևայլ վայրերում գրված ձեռագրերը՝ դրանով փորձելով պատկերացում կազմել՝ ե՞րբ և ո՞ր շրջանների հետ են ավելի սերտ եղել Արցախի մշակութային կապերը:

Ինչպես հայտնի է, մինչև 9-րդ դարը թվականով հստակ թվագրված որևէ հայերեն ձեռագիր մեզ չի հասել³. Արցախում գրված վաղ ձեռագրեր ևս չեն հասել, ամենահին ձեռագրերը 13-րդ դարով են թվագրվում. դրանք Գանձասարում գրված 2 Ավետարան են՝ այժմ Մատենադարանի հ^տ 378 (հստակ թվ. չունի) և 5669 (1279 թ.) ձեռագրերը: Ընդհանուր հաշվով մեզ հասել են 185 ձեռագիր, ևս 49-ի մասին տեղեկություններ կան, հիշա-

¹ **Թովյան Յ.**, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, Վաղարշապատ, 1898: Նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան., Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 72-77:

² Օննիկ Եգանյան, Աշխատութիւններ, հրատ. պատրաստեց՝ **Գ. Տեր-Վարդանեան**, Երևան, 2014, էջ 62-65, 76:

³ **Մաթևոսյան Ա.**, Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., Երևան, 1988, էջ Ը:

տակված են գրականության մեջ, բայց այսօր անհայտ է դրանց գտնվելու վայրը: Հայոց աշխարհի տարբեր վայրերում գրված և Արցախում հայտնված ու պահված ձեռագրերից մեզ են հասել 68-ը, ևս 79-ի մասին գրականությամբ և տարբեր աղբյուրներով տեղեկություններ ունենք, բայց այժմ անհայտ են: Անշուշտ, ինչպես շուտով կտեսնենք հիմնավորմամբ, մեզ չհասած ձեռագրերը շատ ավելի են:

Գրչության նշանավոր կենտրոններն են եղել Գանձասարը, Սուրբ Հակոբա վանքը, Շուշին, Թարգմանչաց վանքը, Դադիվանքը: Սրանցից ամենահարուստը 14-րդ դարից Աղվանքի կաթողիկոսության աթոռանիստ Գանձասարն է, Արցախի խոշոր մշակութային կենտրոնը: Վանքն ուներ իր մատենադարանը և ձեռագրերի հարուստ հավաքածուն, որի մեջ մտնում էին ինչպես տեղում ստեղծված ձեռագրեր, այնպես էլ այլ վայրերից բերված մատյաններ: Ցավոք, այսօր մեզ չեն հասել այդ բոլոր ձեռագրերը, պատմության վայրիվերումների պատճառով կորսվել են, այրվել, զողացվել: Գանձասարում գրված ձեռագրերից այսօր ունենք ընդամենը 14 հատիկ¹, որոնցից հնագույնը 13-րդ դարի Ավետարան է, նորագույնը 1822 թ. Եսայի Հասան-Ջալալյանի ժողոված Վիմական արձանագրությունները: Պահպանված ձեռագրերից 13-ը այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում են, 1-ը՝ Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի գրատանը: Գանձասարի մատենադարանում նաև պահվել են այլ վայրերում գրված ու տարբեր առիթներով այստեղ հասած ձեռագրեր, այսօր դրանցից մեզ են հասել 23-ը, ևս 2-ի մասին տեղեկություն կա, սակայն գտնվելու վայրերն այժմ անհայտ են: Նշանավոր հոգևոր ու մշակութային այնպիսի խոշոր կենտրոն, ինչպիսին Գանձասարն է, 6 դարերի ընթացքում չէր կարող բավարարվել նման քանակով՝ 37 մատյանով, որոնք ոչ միայն անընդհատ ընթերցվում էին ծեսի ժամանակ, այլև միաբանների կրթության ու հոգևոր պահանջների բավարարմանն էին ուղղված: Պատկերն առավել հստակ կլինի, եթե նկատի ունենանք 1 եկեղեցում, 1 քահանայի՝ ծիսական բնույթի ձեռագրեր ունենալու մոտավոր քանակը: Ըստ Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, ձեռագրագետ Գևորգ Տեր-Վարդանյանի հաշվումների՝ յուրաքանչյուր եկեղեցի «պետք է ունենար գոնե 15 գիրք»², իսկ յուրաքանչյուր քահանա «իր հերթին պետք է ունենար զուտ իր սեփական-անձնական՝ կրկին ծիսական բնույթի նուազագույնը 9 գիրք»³: Եթե նկատի ունենանք, թե 6 դարերի ընթացքում քանի քահանա է եղել Գանձասարում, ապա կարող ենք պատկերացնել, թե որքան քիչ է մեզ հասածը: Նույն կերպ պետք է վարվել և մյուս վանքերի ձեռագրերի թվաքանակը հաշվելիս:

¹ Մինայան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 12, 86:

² Գ. Տեր-Վարդանեան, Եղենը և մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 12:

³ Նույն տեղում: Այդ գրքերն են Աղօթագիրք, Աստվածաշունչ, Ավետարան, Գանձարան, Ժամագիրք, Կանոնագիրք, Խորհրդատետր, Ծաշոց, Մաշտոց, Շարակնոց, Հայսմավուրք, Սաղմոսարան, Տոնապատճառ, Տոնացույց, Զարոզգիրք:

Մյուս նշանավոր գրչակենտրոնը Մեծառանց Սուրբ Հակոբա վանքն է, որը 14-15-րդ դարերում երկրորդ առաջնորդանիստն էր: Այստեղ գրված 9 ձեռագիր է պահպանվել՝ բոլորն էլ հանգրվանած Մատենադարանում, ևս 1-ի՝ 1383 թ.ին գրված Ավետարանի մասին, որը մեզ չի հասել: Այս 9 ձեռագրից հնագույնը 1577 թ. Ավետարան է (Մաշտոցյան Մատենադարանի, այսուհետ՝ ՄՄ 5507), մնացած 8-ը 19-րդ դարում Հովսեփ Արցախեցու կողմից գրված ձեռագրեր: Պահված ձեռագրերից միայն 1-ն է հայտնի (ՄՄ 7482):

Արցախ աշխարհի հնագույն վանքերից է Թարգմանչաց վանքը, որից, ցավոք, ևս շատ քիչ մատյաններ են մեզ հասել՝ 19-րդ դարում վանքի վանահոր՝ Թեոդորոս Շիրակունու կողմից գրված 10 ձեռագիր, որոնք բոլորն էլ այժմ Մատենադարանում են: Փոխարենը, այս վանքում է պահվել և նրա անունով կոչվել նշանավոր «Թարգմանչաց Ավետարանը» (ՄՄ 2743): Շուշիում 18-19 դդ.ում գրված 19 ձեռագիր է մեզ հասել, հիմնականում բառարաններ, տոմարական, բժշկական կյուրթերի ժողովածուներ, քերականություն, պատմություն. բոլորն էլ այժմ գտնվում են Մատենադարանում: Շուշիի եկեղեցիներում ևս եղել են այլ վայրերում գրված հիմնականում ծիսական մատյաններ, հատկապես մեծ թվով Ավետարաններ, որոնցից 22-ի տեղն անհայտ է, և միայն մեկն է գտնվում Մատենադարանում (ՄՄ 9431): Գոչավանքից Մատենադարանում ունենք 5 ձեռագիր, որոնցից 4-ը Առաքել Կոստանյանցի կողմից գրված Արցախի պատմության 2-հատորը, Գոչավանքի պատմությունը և 1 ժողովածու, մյուսը՝ Մաշտոց:

Ձեռագրեր են գրվել կամ պահվել ևսև Թաղավարդ, Խնուշինակ, Ճարտար, Աշան, Ղզղալա, Թաղլար, Ագոխ, Խաչմաչ, Կղարծի, Մաղավուզ, Էրքեշ, Խանձաձոր, Ապահեն, Թաղասեռ, Խնածախ, Առաջածոր և այլ գյուղերում, որոնց մեծ մասի գտնվելու վայրերն այժմ անհայտ են, իսկ տեղեկությունները վերը նշված ձեռագրացուցակում և երկերում արձանագրված լինելու շնորհիվ են մեզ հասել:

Ինչպես արդեն նշեցինք, Արցախում պահվում էին ևսև այլ վայրերում ստեղծված ձեռագրեր, որոնց մեջ կան շատ արժեքավոր նմուշներ: Արցախում այլևայլ վայրերից ձեռագրերի հավաքումը պայմանավորվում է երկրամասի համեմատաբար ապահով լինելով, ևսև՝ տեղական իշխանների կողմից փրկագնով կամ գնելով ձեռագրերի ձեռքբերմամբ¹: Արցախում պահված միջնադարյան արվեստի բավականին շատ նշանավոր ձեռագրեր կան. ևսխ և առաջ պետք է հիշել «Վեհափառի Ավետարանը» (ՄՄ 10780) և «Վեհամոր Ավետարանը» (ՄՄ 10680): «Վեհամոր Ավետարանը» այն ձեռագիրն է, որով երգվում են ՀՀ-ի նախագահները՝ երդմնակալության արարողության ժամանակ: Այս 2 Ավետարանները, ինչպես նշում են ուսումնասիրողները, «ճակատագրերի շատ ընդհանրություններ ունեն»², երկար ժամանակ հանգրվանել են Արցախ աշխարհում՝ իրար կից

¹ **Հակոբյան Հ.**, Արցախի մանրանկարչական արվեստը, Երևան, 2014, էջ 19:

² Վազգեն վեհափառի ավետարանը, ուսումնասիրությամբ՝ **Ա. Մաթևոսյանի և Տ. Իզմայլովայի**, Երևան, 2000, էջ 556:

Գարդմանի և Փառիսոսի գավառներում, «Վեհամոր Ավետարանը»՝ Մեծ Բանակց գյուղում, «Վեհափառիկը»՝ Զյուրլար: Ապա 2-ն էլ հայտնվել են ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մոտ, ով 1975 և 1978 թթ.ին նվիրել է Մատենադարանին՝ մեկը ի հիշատակ Վեհամորը՝ Սիրանույշ Պալճեանի (ՄՄ 10680): Վերջինիս հնությունը հասնում է մինչև 7-րդ դար: Մյուս նշանավոր ձեռագրերն են Հաղբատի 1211թ. Ավետարանը (ՄՄ 6288), որն ընդօրինակվելուց 12 տարի անց տեղափոխվել է Արցախ, 1232թ. Թարգմանչաց Ավետարանը (ՄՄ 2743), որն Արցախ է բերել 1311 թ. Գրիգոր Դոփյան իշխանը, Մեծչեն գյուղի 909 թ. Ավետարանը¹, որը գրվել է Կ. Պոլսում, 11-րդ դարի հայտնի «Բեգյունց» Ավետարանը, որը երկար ժամանակ գտնվել է Թալիշ գյուղում², 13-րդ դարի Ավետարանը՝ գրված Սկևռայում (Կիլիկիա), որը պահվում էր Գանձակի Սուրբ Յովհաննես եկեղեցում³ (ձեռ. ՄՄ 6764), 1295 թ. Դրագարկում ընդօրինակված 6290 Ավետարանը: Դատելով այս և Արցախում հանգրվանած մյուս ձեռագրերից՝ պետք է ենթադրել, որ ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկիայի տարբեր շրջաններից ձեռագրեր են հասել Արցախ, ինչը վկայում է մշակութային բազմազան կապերի և հարաբերությունների մասին:

Պատմական տվյալների ամփոփումից հետո, նկատենք, որ կարևոր քայլ է ունեցած ժառանգության պահպանումն ու ներկայացումը, մի գործընթաց, որը տարիներ շարունակ ՀՀ-ում իրականացվում է Մաշտոցի անվան Մատենադարանի կողմից, որտեղ հիմնական ու թեմատիկ, նաև միջազգային ցուցադրություններում միշտ ներկայացվում ու կարևորվում են Արցախում գրված ու պահպանված ձեռագրերը: Մյուս կողմից էլ, Մատենադարանի գիտական բաժիններում իրենց կարգով նկարագրվում և ուսումնասիրվում են արցախյան ձեռագրերը: Բացառիկ նշանակության քայլ էր Գանձասարում Մատենադարանի արցախյան մասնաճյուղի՝ «Գանձասար» գիտամշակութային կենտրոնի բացումը 2015 թվականին, որի շնորհիվ ոչ միայն արցախցին հնարավորություն ունեցավ իր պատմությունը տեսնելու, այլև իր անմիջական հյուրերին՝ հատկապես օտարերկրյա, իրեղեն ապացույցներով ներկայացնելու: Մեզնից յուրաքանչյուրի շնորհիվ ունեցած ձեռագրական ու մանրանկարչական արվեստը պետք է ներկայացվի ոչ միայն մայր հայրենիքի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս՝ իբրև Արցախի դարավոր ինքնության մշակութային և գիտական ապացույցներից մի տեսակը, իբրև ներկային ու ապագային հիմք և հենք տվող գրավական:

¹ Նույն տեղում, էջ 19, նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1970, էջ 269:

² **Հակոբյան Հ.**, Արցախի մանրանկարչական արվեստը, Երևան, 2014, էջ 20, նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1970 թ., էջ 1047, **Յովսեփեան Գ.**, Յիշատակարանք, Անթիլիաս, 1951, էջ 237:

³ **Հակոբյան Հ.**, Արցախի մանրանկարչական արվեստը, Երևան, 2014, նաև **Բարխուտարեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 39:

Քնար Հարությունյան

ԱՐՑԱԽՅԱԼ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ. ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Բանալի բառեր՝ *ձեռագիր, Արցախ, մշակութային ժառանգություն, Արցախի ձեռագրատներ*

Հոդվածում ներկայացվում է Արցախի ձեռագրական ժառանգությունը: Ձեռագրացուցակների և ուսումնասիրությունների քննությամբ պարզվում է, որ Արցախից մեզ հասել են այնտեղ գրված 185 ձեռագիր, ևս 68-ը՝ այլ վայրերում գրված ու Արցախում պահված, որոնցից շատերը եզակի ու արժեքավոր մատյաններ են, Արցախի՝ հայոց աշխարհի տարբեր շրջանների հետ ունեցած մշակութային սերտ կապերի ապացույց:

Кнар Арутюнян

МАТЕНАДАРАН АРЦАХА: ВЧЕРА И СЕГОДНЯ

Ключевые слова: *рукопись, Арцах, культурные связи, скриптории Арцаха*

В данной работе представлено рукописное наследие Арцаха, рукописи, переписанные или хранившиеся здесь. По данным каталогов и исследований, выясняем, что из Арцаха да нас дошло 185 арцахских рукописей, и еще 68 хранившихся там манускриптов, среди них множество уникальных. Дошедшие рукописи свидетельствуют о тесных культурных связях Арцаха со всеми регионами Армении.

Кнар Harutyunyan

THE MATENADARAN OF ARTSAKH: PAST AND PRESENT

Key words: *manuscript, Artsakh, cultural relations, scriptoria of Artsakh*

In our report we present the manuscript heritage and the scriptoria of Artsakh, show how many of manuscripts have reached to us. According to catalogs of Armenian manuscripts and researches now we have 185 manuscripts, that have been copied and 68, that have been preserved in Artsakh. Exploring the manuscripts that have been preserved in Artsakh, we know that Artsakh has been in cultural relations with other regions of Armenia.